Հայոց լեզու և հայ գրականություն

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը բաղկացած է 35 առաջադրանքից, որոնք, ըստ քննվող նյութի թեմաների, առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ:

1. Առաջադրանքների կառուցվածքային տեսակները և դրանց տրվող միավորները.

տեսակը	**քանակը**	**միավորը**
ընտրովի պատասխանով	26	26
կարճ պատասխանով	7	9
ընդարձակ պատասխանով	2	5
ընդամենը	35	40

2. Առաջադրանքների բովանդակային տեսակները և դրանց տրվող միավորները.

տեսակը	**քանակը**	**միավորը**
հայոց լեզու	28	35
հնչյունաբանություն ուղղագրություն	4	4
բառագիտություն	5	5
ձևաբանություն	6	6
շարահյուսություն	9	9
կետադրություն	1	3
կապակցված խոսք	4	4
շարադրություն	1	4

հայ գրականություն	5	5
ընդամենը	35	40

3. Առաջադրանքների կառուցվածքային և բովանդակային տեսակների համամասնությունը.

կառուցվածքային տեսակը	**բովանդակային տեսակը**			
	հայոց լեզու		**հայ գրականություն**	
	քանակը	**միավորը**	**քանակը**	**միավորը**
ընտրովի պատասխանով	23	23	3	3
կարճ պատասխանով	5	7	2	2
ընդարձակ պատասխանով	2	5		
ընդամենը	30	35	5	5

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Կարճ պատասխանով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Եթե այդ առաջադրանքները ենթահարցերով են, ապա յուրաքանչյուր ենթահարցի ճիշտ պատասխանի համար տրվում է 1-ական միավոր:

Կետադրության վերաբերյալ առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ կետադրական նշանի համար՝ 1 միավոր (ընդամենը՝ 3 միավոր): Եթե տվյալ կետադրական կանոնը պահանջում է 2 կետադրական նշան (օրինակ՝ հետադաս ծավալուն որոշիչը՝ բութ և ստորակետ), ապա 1 միավոր է տրվում այն դեպքում, եթե 2 նշանն էլ ճիշտ են դրված:

Ցանկացած այլ (ավելորդ կամ սխալ) կետադրական նշաններից յուրաքանչյուրի գործածության դեպքում այս առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է մեկական միավոր:

Եթե հանվելիք միավորների թիվը 3 և ավելի է, ապա առաջադրանքին միավոր չի տրվում, սակայն թեստի ընդհանուր միավորներից միավոր չի հանվում:

Ընդարձակ պատասխանով առաջադրանքները հետևյալ տիպերի են՝

1. *վերարտադրել շարադրանքի (տեքստի) առաջին նախադասությունը՝ ըստ շարադրանքի բովանդակության,*
2. *գրել կապակցված խոսք տրված բառերով կամ համառոտ վերապատմել այսինչ ծրագրային գեղարվեստական ստեղծագործության այսինչ հատվածը կամ ստեղծագործությունը ամբողջությամբ:*

Ընդարձակ պատասխանով առաջադրանքներից առաջինն տրվում է 1 միավոր, երկրորդին՝ առավելագույնը 4:

2-րդ տիպի առաջադրանքները երկու տեսակի են: Դրանք երկուսն էլ գնահատվում են միևնույն չափանիշներով: Եթե առաջադրանքը որևէ գեղարվեստական ստեղծագործության վերաբերյալ է, ապա միավոր չի հանվում թույլ տրված սյուժետային, գաղափարական կամ գրականագիտությանը վերաբերող այլ անճշտությունների համար:

Երկրորդ տիպի ընդարձակ պատասխանը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք, սկիզբ, միջին մաս, ավարտ,
- նախադասությունների (5-7) կամ բառերի (50-60) քանակը չի համապատասխանում պահանջվածին,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը (համապատասխան տեսակի առաջադրանքի դեպքում):

Առավելագույն միավորից միավոր է հանվում հետևյալ դեպքերում՝

- կա 1-2 ուղղագրական սխալ՝ 1 միավոր, 3 և ավելի՝ 2 միավոր,
- կա 2-4 կետադրական սխալ՝ 1 միավոր, 5 և ավելի՝ 2 միավոր,
- կա 1-2 սխալ կամ ոճականորեն չպատճառաբանված բառագործածություն՝1 միավոր, 3 և ավելի՝ 2 միավոր,
- կա բառի քերականական ձևի, խնդրառության, համաձայնության կամ շարադասության 1-2 սխալ՝ 1 միավոր, 3 և ավելի՝ 2 միավոր,
- նախադասությունների միջև առկա է տրամաբանական կապի խախտման կամ ստորոգյալների ժամանակային ձևերի չպատճառաբանված անհամաձայնության՝ 1-2 դեպք՝ 1 միավոր, 3 և ավելի՝ 2 միավոր:

Եթե հանվելիք միավորների թիվը 4 և ավելի է, ապա առաջադրանքին միավոր չի տրվում, սակայն թեստի ընդհանուր միավորներից միավոր չի հանվում: